

# Հայ-լեհական ռազմական համագործակցությունը 1922-2018 թվականներին

*Մատինյան Հենրի*

**Հանգուցային բառեր.** Հայաստան, Լեհաստան, հայ-լեհական հարաբերություններ, ռազմական համագործակցություն, ռազմական արդյունաբերություն, բանակ, պաշտպանություն, ռազմական բարեփոխումներ

1992 թվականի փետրվարի 26-ին Հայաստանի և Լեհաստանի հանրապետությունների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ<sup>1</sup>, որոնք իրավական առումով հիմքեր ձևավորեցին ոլորտային համագործակցության համար: Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների արդի էտապում, ի թիվս քաղաքական, տնտեսական, գիտամշակութային և այլ բնագավառներում զարգացող համագործակցության, Հայաստանի Հանրապետության համար գերակա նշանակություն ունի հատկապես ռազմական փոխգործակցությունը Լեհաստանի Հանրապետության հետ: Դա կարևոր է Արցախյան հակամարտությունը Մինսկի խմբի շրջանակներում բանակցային ճանապարհով լուծելու հարցում, որը հնարավորություն կտա չեզոքացնել Ադրբեյջանի Հանրապետության կողմից մշտապես հնչեցվող հռետորաբանությունը:

Իրավական հարթությունում հայ-լեհական ռազմական համագործակցության հիմքեր ձեռք են բերվել դեռևս 2004 թվականի սեպտեմբերի 6-ին Վարշավայում՝ երկու երկրների կառավարությունների միջև պաշտպանության բնագավառում համագործակցության մասին պայմանագիր ստորագրելով<sup>2</sup>: Կարելի է արձանագրել, որ Հայաստանի և Լեհաստանի պաշտպանության գերատեսչությունների միջև համագործակցությունը դե ֆակտո մեկնարկել է Լեհաստանի ազգային պաշտպանության նախարար Բոգդան Կլիխի՝ 2009 թվականի նոյեմբերի 27-ին Հայաստան կատարած երկօրյա այցով: Ինչպես տեղեկանում ենք ՀՀ պաշտպանության նախարարության տարածած տեղեկատվությունից, երկու երկրների պաշտպանության նախարարների հանդիպման ընթացքում քննարկվել են ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում հայ-լեհական պաշտպանական համագործակցության ակտիվացմանը վերաբերող «երկուստեք հետաքրքրություն ներկայացնող, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցեր»<sup>3</sup>: Լեհ պաշտոնյան բարձր է գնահատել 2005-2008 թվականներին Իրաքում լեհական հրամանատարության ներքո գտնվող բազմազգ դիվիզիայի կազմում հայ խաղաղապահների կողմից իրականացված առաքելությունը<sup>4</sup> և նշել, որ հայ-լեհական պաշտպանական համագործակցությունը

<sup>1</sup> Լեհաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանության պաշտոնական կայք, <http://poland.mfa.am>

<sup>2</sup> Լեհաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանության պաշտոնական կայք, <http://www.mfa.am/hy/bilateral-relations/pl>

<sup>3</sup> ՀՀ ՊՆ պաշտոնական կայք, Լեհաստանի ազգային պաշտպանության նախարարի այցը Հայաստան, 27 նոյեմբերի, 2009, <http://www.mil.am/hy/news/1055>

<sup>4</sup> Նույն տեղում:

նը միտում ունի ընդլայնվելու և զարգանալու<sup>5</sup>: ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը կարևորել է հատկապես այն հանգամանքը, որ Լեհաստանը ՆԱՏՕ-ի անդամ երկիր է, հետևաբար «Հայաստանի փոխլրացման քաղաքականության շրջանակներում համագործակցությունը տարբեր կազմակերպությունների՝ ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի հետ, հնարավորություն կտա տիրապետելու տարբեր չափանիշների»<sup>6</sup>: Բոգդան Կլիխը պաշտոնական այցի շրջանակներում հանդիպել է նաև ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի և ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի հետ, քննարկել հայ-լեհական ռազմատեխնիկական համագործակցության մի շարք հարցեր<sup>7</sup>:

Լեհաստանի նախարարի այցին հաջորդեց 2010 թվականի հունիսի 1-ին Հայաստանում Լեհաստանի ռազմական կցորդի գրասենյակի բացումը<sup>8</sup>: Այդ կապակցությամբ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը նույն օրը ընդունեց Լեհաստանի արտակարգ և լիազոր դեսպան Զոլիսլավ Ռաչինսկուն: Նա նշեց, որ նորաստեղծ ռազմական կցորդի գրասենյակը՝ ի դեմս գնդապետ Դարիուժ Պոգորժենսկու, նպաստելու է երկու երկրների միջև ստեղծված վստահության, միջազգային կայունության և խաղաղության ամրապնդմանը<sup>9</sup>:

ՀՀ պաշտպանության նախարարության «Հայ զինվոր» հանդեսի տեղեկությամբ 2010թ. սեպտեմբերին պաշտպանության նախարարության պատվիրակությունը մասնակցել է լեհական Կիելցե քաղաքում կայացած ռազմարդյունաբերական ցուցահանդեսին<sup>10</sup>, իսկ հոկտեմբերին Հունաստանում կայացած «DEFENSYS 2010» ցուցահանդեսի ընթացքում հայկական և լեհական կողմերի միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր<sup>11</sup>:

Հայաստանում գործող ռազմական արդյունաբերության ձեռնարկությունների ընձեռած պայմաններին և հետագա երկկողմ համագործակցության հնարավորություններին ծանոթանալու նպատակով 2011 թվականի հունվարի 20-ին Հայաստան է ժամանել Լեհաստանի փոխպետքարտուղար Մարչին Իջիկի գլխավոր

---

<sup>5</sup> Բոգդան Կլիխ «Հայ-լեհական պաշտպանական համագործակցությունն ընդլայնվելու է», 28 նոյեմբերի, 2009, <https://armenpress.am/arm/amp/577941>

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> ՀՀ վարչապետն ընդունել է Լեհաստանի Հանրապետության ազգային պաշտպանության նախարարին, 28 նոյեմբերի, 2009, <https://armenpress.am/arm/news/577956/hh-varchapetn-yndunel-e-lehastani-hanrapetutyantzgayinpashtranutyan.html>; Armenpress, ԱՄԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Բոգդան Կլիխին, 28 նոյեմբերի, 2009. <https://armenpress.am/arm/news/577943.html>

<sup>8</sup> ՀՀ ՊՆ պաշտոնական կայք, Հայաստանում ստեղծվել է Լեհաստանի ռազմական կցորդի գրասենյակ, 1 հունիսի, 2010. <http://www.mil.am/hy/news/746>

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Յուգահանդեսի մասին առավել մանրամասն տե՛ս XXVI Międzynarodowy Salon Przemysłu Obronnego MSPO, <https://www.targikielce.pl/pl/targi-obronne-targi-zbrojeniowe-uzbrojenie-i-wyposazenie-wojska,16737,d.htm>

<sup>11</sup> ՀՀ պաշտպանության նախարարության «Հայ զինվոր» հանդես, Հայ-լեհական համագործակցություն, N 44 (1062) 13.11.2014-19.11.2014. <http://www.hayzinvor.am/29059.html>

րած պատվիրակությունը<sup>12</sup>: Այցի շրջանակում Մարչին Իջիկը բարձր է գնահատել հայ-լեհական համագործակցությունը՝ նշելով, որ անհրաժեշտ պայմաններն առկա են հայ-լեհական ռազմական փոխգործակցությունը զարգացնելու նպատակով: Վերոնշյալ այցին հետևեցին երկկողմանի մի շարք այլ հանդիպումներ՝ համագործակցության հեռանկարներին տեղում ծանոթանալու նպատակով: Նույն թվականի փետրվարի 22-24-ը Երևանում տեղի ունեցավ Լեհաստանի ազգային պաշտպանության նախարարության վերափոխումների վարչության պետի և Պաշտպանության ազգային ակադեմիայի պետի գլխավորած պատվիրակության հանդիպումը ՀՀ պաշտպանության նախարարության ղեկավարության հետ<sup>13</sup>: Կողմերը քննարկեցին ռազմական կրթության բնագավառում համագործակցության և պաշտպանական բարեփոխումներում փորձի փոխանակման հարցեր, ստորագրեցին 2011 թվականի երկկողմ համագործակցության պլան<sup>14</sup>:

Հայ-լեհական ռազմական համագործակցության շրջանակներում հերթական հանդիպումը տեղի ունեցավ 2011 թվականի հոկտեմբերի 18-ին՝ Հայաստանի ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի և Լեհաստանի ազգային անվտանգության բյուրոյի ղեկավար Ստանիսլավ Կոզիեյի միջև<sup>15</sup>: Նրանք պայմանավորվածություն ձեռք բերեցին ռազմական կրթության շրջանակներում փորձի փոխանակման և համագործակցության, ինչպես նաև զինտեխնիկայի, սպառազինության օգտագործման ու արդիականացման հարցերում: Պայմանավորվածության հիման վրա հայ սպաներին ու կուրսանտներին հնարավորություն տրվեց ռազմական կրթություն ստանալ Վարշավայի ռազմական ակադեմիայում: «Լեհաստանը պատրաստ է աջակցել Հայաստանի սպաներին, – նշեց Կոզիեյը, – որպեսզի նրանք սովորեն Վարշավայի ռազմական ակադեմիայում: 1990-ական թվականներին Լեհաստանի փորձը ցույց տվեց, որ ուսումնական այդ ոլորտի զարգացումը խիստ կարևոր է»<sup>16</sup>: Մակայն պետական մակարդակով ռազմական կրթության բնագավառում այդպիսի համագործակցություն մի շարք պատճառներով չկայացավ: ՀՀ պաշտպանության նախարարության գործընկեր եվրոպական ռազմական հաստատությունների շարքում Լեհաստանից ներկայացված ոչ մի հաստատություն ներկայումս չկա<sup>17</sup>:

Մադնային վիճակում մնաց նաև զինտեխնիկայի ու սպառազինության ար-

---

<sup>12</sup> ՀՀ ՊՆ պաշտոնական կայք, Minister of Defence receives the Under-Secretary of State in the Ministry of National Defence of the Republic of Poland, 20 January, 2011, <http://www.mil.am/en/news/407>

<sup>13</sup> ՀՀ ՊՆ պաշտոնական կայք, Լեհաստանի ազգային պաշտպանության նախարարության պատվիրակության այցը Հայաստան, 24 փետրվարի, 2011, <http://www.mil.am/hy/news/362>

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Արման Գասպարյան, Օրինակելի և նախանձելի համագործակցություն. մոտ ապագայում կստեղծվեն հայ-լեհական համատեղ ռազմարդյունաբերական ձեռնարկություններ, «Հայաստանի Հանրապետություն», 19 հոկտեմբերի, 2011:

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայք, Մովորել արտերկրում <http://mil.am/hy/structures/68>

դիականացմանն ուղղված համագործակցությունը: 2013 թվականին ռուսական և հայկական մամուլում լուրեր տարածվեցին այն մասին, որ հայկական թվով ութսունչորս «T-72» տիպի տանկեր պետք է արդիականացվեն լեհական «Բումար Լաբեդի» ընկերությունում<sup>18</sup>: Տեղեկությունը հրապարակել էր ռուսական հայտնի «Զենքի համաշխարհային առևտրի վերլուծության կենտրոնը»: Հայկական տանկերը պետք է հասնեին լեհական «PT-72U» տանկի մակարդակի, որն իր հզորությամբ հավասարագոր է ռուսական «T-90» տանկին: «PT-72U» տանկը, խորհրդային «T-72» տանկի կատարելագործված տեսակն է և նախատեսված է առավելապես լոկալ պատերազմներում կիրառելու համար: Ի տարբերություն «T-72»-ի շարժիչի, որի հզորությունը 780 ձիաուժ է, «PT-72U» տանկի շարժիչը 1000 ձիաուժ է, ունի հզորացված դինամիկ գրահ, աշտարակի ու իրանի հետին մասերում ավելացված են ցանցային հակակոմունյատիվ էկրաններ, աշտարակին ամրացված է տուրել, որի վրա ամրացված է 12.7 մմ տրամաչափի հեռակառավարվող գնդացի, ինչպես նաև տեղադրված են տանկի շուրջբոլորը տեսանկարահանող տեսախցիկներ<sup>19</sup>: Ռուսական կենտրոնի գեկույցում նշվում էր նաև, որ կողմերի միջև պայմանավորվածություն ձեռք է բերվել դեռևս 2012 թվականին, քսանչորս տանկ պետք է արդիականացվեր 2013-ին, իսկ երեսնական տանկ, համապատասխանաբար, 2014 և 2015 թվականներին: Գործարքի ընդհանուր գումարը կազմելու էր 100 մլն ԱՄՆ դոլար<sup>20</sup>: Հայկական կողմը այս մասին պաշտոնական ոչ մի հայտարարություն չի արել: ՊՆ խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը, հայկական «Ազատություն» լրատվականին տված հարցազրույցում նշել է. «Նման տեղեկություններ չենք տրամադրում մամուլին, թե սպառազինության ինչ քանակ, տեսակ որտեղ ենք կատարելագործում: Հայաստանի պաշտպանության նախարարության սպառազինության կատարելագործումը շարունակական գործ է և հանդիսանում է մեր աշխատանքի գերակա ուղղություններից մեկը»<sup>21</sup>:

Եթե առերեսվենք այն խնդրին, որ Ռուսաստանն այդ ժամանակ մոտ 4 միլիարդի ռազմական սպառազինություն վաճառքի պայմանագիր ուներ Ադրբեյջանի հետ, արդեն մատակարարել էր հարձակողական նշանակության մեծաքանակ տեխնիկա, այդ թվում՝ իննսունչորս հատ «T-90с» տեսակի տանկեր<sup>22</sup>, ապա պետք է փաստել, որ հայկական երկու պետությունների պաշտպանությունն ապահովելու նպատակով Ադրբեյջանի հետ «ռազմական բալանսը» պահպանելու տեսանկյունից տանկերի արդիականացման ծրագիրը շահեկան էր Հայաստանի համար: Համաձայն «Ռազմ. ինֆո»-ի կատարած վերլուծության՝ հայկական երկու պետու-

<sup>18</sup> Ռազմ. info, Զեկույց Լեհաստանը Հայաստանի համար 84 տանկ է արդիականացնում, 2 դեկտեմբերի, 2013, <https://razm.info/26486>; Ռազմ. info, Когда модернизация T-72 предпочтительнее приобретения T-90, 3 հունվարի, 2014, <https://razm.info/ru/522>;

<sup>19</sup> Ռազմ. info, Զեկույց. Լեհաստանը Հայաստանի համար 84 տանկ է արդիականացնում, 2 դեկտեմբերի, 2013, <https://razm.info/26486>

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> «Ազատություն» ռադիոկայան, Մինչև տարեվերջ Հայաստանի զինված ուժերը կհամալրվեն արդիական տանկերով, 4 դեկտեմբերի, 2013, <https://www.azatutyun.am/a/25189948.html>

<sup>22</sup> Նույն տեղում:

թյունները միասին ունեին մոտ 540-550 «T-72» տեսակի տանկ («T-90» տեսակի տանկեր բացակայում են), իսկ Ադրբեջանը՝ 287-305 հատ «T-72» և 94 հատ «T-90», ընդհանուր՝ 479-504 տանկ<sup>23</sup>։ Ասվածից պարզ է դառնում, որ ֆինանսական առավել նվազ միջոցներով «T-72»-ից «T-90»-ի հզորության տանկեր «ստանալը» ունենալու էր նույն դերը, առավել ևս, երբ հայկական բանակում առկա «T-72» տանկերը մոտ 200-ով ավելի են, քան Ադրբեջանինը։ Սակայն Լեհական մամուլը հերքեց շրջանառության մեջ դրված լուրերը՝ հղում անելով լեհական այն ընկերություններին, որոնք պետք է իրականացնեին տանկերի արդիականացման աշխատանքները<sup>24</sup>։ Եթե Հայաստանը տանկերի արդիականացման հարցում ֆինանսական որևէ խնդիր չի ունեցել, ապա կարելի է ենթադրել, որ ծրագիրը չիրականացվեց հետևյալ պատճառներով։

Առաջին Ռուսաստանն իր ունեցած լծակներով ճնշում գործադրեց Հայաստանի վրա, որպեսզի վերջինս հրաժարվի «ՆԱՏՕ»-ի անդամ և Ռուսաստանի հետ ավանդական ոչ դրացիական հարաբերություններ ունեցող երկրի հետ նման ռազմական փոխգործակցությունից։

Երկրորդ Լեհաստանը Ռուսաստանի ռազմավարական դաշնակից Հայաստանին խորհրդային տանկերի արդիականացված տարբերակները չվաճառեց պարզապես չջանկանալով բացահայտել Ռուսաստանին կատարելագործման «բաղադրատոմսը»։ Լեհական համացանցում և մամուլի հրապարակումներում գերիշխում է այս հանրային կարծիքը։

Ռազմական ոլորտում երկկողմ հարաբերությունները զարգացնելու նպատակով դեռևս 2012 թվականի նոյեմբերի 13-ից գործում է հայ-լեհական ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողով, որի կազմը հաստատվել է վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբ<sup>25</sup>։ Խնդիր է դրվել հանձնաժողովի հայկական կողմի աշխատանքները սկսել 3 ամսվա ընթացքում, իսկ համատեղ անդրանիկ նիստի գումարման նպատակով բանակցություններ վարել լեհական կողմի հետ<sup>26</sup>։ 2013 թվականի մարտի 27-ին Վարչապայտում կայացել է հայ-լեհական ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի նիստ<sup>27</sup>։ Հանձնաժողովի լեհական կողմի համանա-

---

<sup>23</sup> Ռազմ. info, Հայաստանի ու Ադրբեջանի «տանկային բալանսի» խնդիրը, 26 օգոստոսի, 2013, <https://razm.info/18679>

<sup>24</sup>Altair Agencja Lotnicza, Polska modernizacja armeńskich T-72? 5 դեկտեմբերի, 2013, [https://www.altair.com.pl/news/view?news\\_id=12118](https://www.altair.com.pl/news/view?news_id=12118); Altair Agencja Lotnicza, Jeszcze o armeńskich T-72, 6 դեկտեմբերի, 2013. [https://www.altair.com.pl/news/view?news\\_id=12130](https://www.altair.com.pl/news/view?news_id=12130)

<sup>25</sup> Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշում, 13 նոյեմբերի, 2012 թվականի N 1111-Ս <https://www.e-gov.am/decrees/item/11511/>

<sup>26</sup> Նույն տեղում։

<sup>27</sup> «Ազատություն» ռադիոկայան, Հայ-լեհական ՀՀ ռազմական արդյունաբերության ոլորտում, 27 մարտի, 2013, <https://www.azatutyun.am/a/24940421.html>; Armenpress, Քննարկվել են ռազմական արդյունաբերության ոլորտում հայ-լեհական համագործակցության խորացմանն առնչվող հարցեր, 27 մարտի, 2013, <https://armenpress.am/arm/news/712975/qnnarkvel-en-razmakan-ardyunaberutyanyan-olortum-hay-lehakan.html>.

խագահ Տոմաշ Տոմշիկևիչի հրավերով հանձնաժողովի աշխատանքներին մասնակցել է ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը՝ մարտի 26-28-ը պաշտոնական այցով գտնվելով Վարշավայում<sup>28</sup>։ Այցի շրջանակներում, ի թիվս քաղաքական այլ թեմաների, քննարկումներ են տեղի ունեցել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման, ինչպես նաև ՆԱՏՕ-Հայաստան համագործակցության հետագա զարգացման վերաբերյալ։ Երկու երկրների միջև ռազմատեխնիկական համագործակցության տեսանկյունից այդ հանդիպումը հատկապես կարևոր էր այն իմաստով, որ լեհական «Լյուբավա» ընկերության և ՀՀ Պաշտպանության նախարարության Չարենցավանի հաստոցաշինական գործարանի միջև ձեռք է բերվել համաձայնություն հայ-լեհական համատեղ ռազմական ձեռնարկություն ստեղծելու վերաբերյալ<sup>29</sup>։ Լեհաստանի Ազգային անվտանգության բյուրոյի ղեկավար Ստանիսլավ Կոզլեյի հետ հանդիպման արդյունքում էլ պայմանավորվածություն կայացավ երկկողմ ռազմատեխնիկական համագործակցությունը առավել սերտացնելու նպատակով նույն թվականի ապրիլի 23-26-ը հանձնաժողովի երրորդ նիստը գումարել Երևանում, որին պետք է մասնակցեր բյուրոյի պատվիրակությունը<sup>30</sup>։ Այդ համագործակցությունը խորացնելու և զարգացնելու նպատակով 2014 թվականի հոկտեմբերի 14-ին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը հանդիպում է ունեցել Հայաստանի այցելած Լեհաստանի Հանրապետության Սենատի անդամ, նախկին ազգային պաշտպանության նախարար Բոգդան Կլիխի հետ, քննարկել հայ-լեհական ռազմական համագործակցության արդի վիճակը, արդյունքներն ու զարգացումները<sup>31</sup>։ Այդ համագործակցության արդյունքում 2014 թվականի հոկտեմբերի 16-ին բացվել է հայ-լեհական առաջին՝ «Լյուբավա-Արմենիա» ռազմարդյունաբերական ձեռնարկությունը<sup>32</sup>։

Լեհական կողմը 2013 թվականի օգոստոսից մինչև 2014 թվականի հունիսը

---

<sup>28</sup> Edgar Broyan . Artur Bagdasaryan w Polsce, Awedis, nr. 14 ,Wiosna, 2013, էջ 1, 4:

<sup>29</sup> Armenpress, Քննարկվել են ռազմական արդյունաբերության ոլորտում հայ-լեհական համագործակցության խորացմանն առնչվող հարցեր, 27 մարտի, 2013.  
<https://armenpress.am/arm/news/712975/qnnarkvel-en-razmakan-ardyunaberutyan-olortum-hay-lehakan.html>.

<sup>30</sup> Նույն տեղում:

<sup>31</sup> ՀՀ Պաշտպանության նախարարության պաշտոնական կայք. Քննարկվել են հայ-լեհական ռազմական համագործակցության զարգացումները, 14 հոկտեմբերի, 2014, <http://www.mil.am/hy/news/3218>

<sup>32</sup> Dziennik Zbrojny, Polskie helmy i kamizelki będą produkowane w Armenii, 20 հոկտեմբերի 2014, <http://www.eastbook.eu/2014/10/22/lubawa-armenia-polsko-wspolpraca-wojskowa/>; Հայաստանի Հանրապետությունում Լեհաստանի Հանրապետության ղեսպանության պաշտոնական կայք, Otwarcie fabryki w Czarencewanie, 16 հոկտեմբերի, 2016, [https://erywan.msz.gov.pl/pl/aktualnosci/otwarcie\\_fabryki\\_w\\_czarencewanie](https://erywan.msz.gov.pl/pl/aktualnosci/otwarcie_fabryki_w_czarencewanie;);

ձեռնարկությունում կատարել է 2 մլն դոլարի ներդրում՝ հետագայում այն 10 մլն դոլարի հասցնելու ակնկալիքով<sup>33</sup>։ Հայկական կողմը, համապատասխանաբար, որպես լրացուցիչ ներդրում համատեղ ձեռնարկությանն է տրամադրել հաստոցաշինական գործարանի գույքը։ «Լյուբավա Արմենիա» ՓԲԸ-ն մտնում է «Լյուբավա» խմբի մեջ, որը ռազմական արտադրության ոլորտում բազմամյա հարուստ փորձ ունեցող կազմակերպություն է և հաստատել է իր փորձը ՆԱՏՕ սերտիֆիկացման, կառավարման որակի չափանիշների, արտադրության կառավարման համակարգերի և որակավորված առևտրի հարցերում<sup>34</sup>։ Այն հիմնադրվել է 1951 թվականին, մասնաճյուղեր ունի աշխարհի տարբեր կողմերում, այդ թվում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, իսկ 1996 թվականին ներգրավվել է Վարշավայի ֆոնդային բորսայում<sup>35</sup>։

Չարենցավանի հաստոցաշինական գործարանի հենքի վրա ստեղծված հայլեհական առաջին համատեղ ձեռնարկությունը զբաղվում է ինչպես արտադրական օբյեկտների արդիականացմամբ, նորոգմամբ, այնպես էլ բազմաֆունկցիոնալ արդի տեխնոլոգիաների արտադրությամբ։ Ընկերությունն արտադրում է մի քանի հարյուր տեսակ ապրանքներ, այդ թվում՝ ռազմատեխնիկական նշանակության արտադրատեսակներ՝ կեղծ թիրախներ, տեխնիկական և այլ վրաններ, սաղավարտներ, գրահաբաճկոններ, քողարկող ցանցեր, հակազագեր, շարժական հակաբեկորային ծածկույթներ, ավիացիոն սարքավորումներ, օդապարիկներ, հակապայթյունային գորգեր, հակապայթյոցիչ աթոռներ, փրկարարական բաճկոններ և այլն<sup>36</sup>։ Համատեղ ձեռնարկության բացման արարողությանը լեհական պաշտոնական կողմից մասնակցում էին ՀՀ-ում Լեհաստանի դեսպան Ջոիսլավ Ռաչինսկին և Լեհաստանի Սենատի անդամ, Լեհաստանի ազգային պաշտպանության նախկին նախարար Բոգդան Կլիխը։ Նրանք, կարևորելով ձեռնարկության բացումը, համոզմունք հայտնեցին, որ այն երկուստեք ռազմական համագործակցության և հատկապես ՀՀ ռազմական ոլորտում լեհական ներդրումների համար նոր ուղի կբացի, որին կհետևեն նաև ռազմարդյունաբերական այլ ձեռնարկություններ։ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը վստահություն հայտնեց, որ նորաբաց ձեռնարկությունը կընդլայնի իր գործունեությունը և արագ տեմպերով արտադրանք կարտահանի Եվրասիական տնտեսական միության երկրներ ու միջազգային այլ շուկաներ<sup>37</sup>։ 2016 թվականի հունվարի 22-ին ընկերությունը արտադրանք է արտահանել Հայաստանի սահմաններից դուրս։ «Լեհական օգնություն» ծրագրի շրջանակներում փրկարարական և ռիսկի նվազեցման սարքավորումներ են մատակարարվել Վրաստանի արտակարգ իրավիճակ-

---

<sup>33</sup> ՀՀ կառավարության պաշտոնական կայք, Կբարելավվի գործարար միջավայրը, 19 հունիսի, 2014, <http://www.gov.am/am/news/item/11392/>

<sup>34</sup> “Grupa Lubawa” կազմակերպության պաշտոնական կայք, <http://www.lubawagroup.com/index.php/grupa-lubawa/grupa-lubawa>

<sup>35</sup> Նույն տեղում։

<sup>36</sup> «Լյուբավա Արմենիա» ՓԲԸ պաշտոնական կայք, <http://www.lubawa.am/download/lubawa-military-am.pdf>

<sup>37</sup> Նույն տեղում։

ների գործակալությանը<sup>38</sup>: Մարքավորումների թվում եղել են գազադիմացկուն հանդերձանքներ, բժշկական պայուսակներ, վարակազերծման խցիկներ և պնևմատիկ վրաններ: Վրաստանի արտակարգ իրավիճակների գործակալության մի քանի փրկարարներ վերապատրաստվել են «Լյուբավա Արմենիայի» բազայում՝ ընկերության հաշվին:

Ստեղծման օրվանից սկսած՝ ձեռնարկությունը գտնվել է ՀՀ պաշտպանության նախարարության մշտական ուշադրության ներքո: 2014 դեկտեմբերի 12-ին ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը հանդիպում է ունեցել «Լյուբավա» արդյունաբերական խմբի տնօրենների խորհրդի նախագահ Մարչին Կուբիցայի և «Լյուբավա Արմենիա» ՓԲԸ տնօրեն Յարոսլավ Ռուլիի հետ<sup>39</sup>: Հանդիպման ընթացքում քննարկվել են ձեռնարկության ռազմավարական զարգացման ծրագիրը, լեհ գործարարներին ՀՀ կառավարության կողմից ֆինանսական օժանդակություն տալու, ինչպես նաև ներդրումային կապիտալի մեծացման հարցեր: Նախարար Սեյրան Օհանյանի՝ 2016 թվականի մայիսի 13-ին կատարած այցի ընթացքում ձեռնարկությունը ներկայացրել է թողարկած նոր արտադրատեսակները, առաջիկա ծրագրերն ու անելիքները: Նա ծանոթացել է ձեռնարկությունների տեխնիկական հագեցվածությանը, ռազմական նշանակության արտադրատեսակների նմուշներին, դրանց պատրաստման, նորոգման և արդիականացման աշխատանքներին<sup>40</sup>:

Հայ-լեհական ռազմական համագործակցությունը համատեղ ձեռնարկություն բացելուց ի վեր ստացել է նոր հնչեղություն: Կողմերը հանդես են եկել հարաբերությունների ընդլայնման ուղղված նախաձեռնություններով: Այդ նպատակով 2016 սեպտեմբերի 6-9-ը և 2017 թվականի սեպտեմբերի 3-6-ը Լեհաստանի պաշտպանության նախարարության հրավերով Վարշավա մեկնեցին Հայաստանի պաշտպանության նախարարի տեղակալ, ՊՆ ռազմարդյունաբերական կոմիտեի նախագահ Դավիթ Փախչանյանի գլխավորած պատվիրակությունները<sup>41</sup>: Առաջին այցը պայմանավորված էր Լեհաստանի Կիելցե քաղաքում կայանալիք ամենամյա ռազմարդյունաբերական միջազգային 24-րդ, իսկ երկրորդ այցը՝ 25-րդ ցուցահանդեսին մասնակցելու նպատակով: Առաջին այցի ընթացքում հանդիպումներ են եղել Լեհաստանի ազգային պաշտպանության նախարարի տեղակալ Բարտոշ Կովնացկու հետ, քննարկել հայ-լեհական ռազմարդյունաբերական համագործակցության հարցեր, անդրադարձել հայ-լեհական նորաբաց «Լյուբավա-Արմենիա» ձեռնարկությանը՝ իբրև երկկողմ համագործակցության դրական օրինակ: Դավիթ Փախչանյանը հանդիպումներ է ունեցել նաև Լեհաստանի ազգային

<sup>38</sup> Նույն տեղում:

<sup>39</sup> «Հայաստանի Հանրապետություն», Հանդիպումներ ՀՀ ՊՆ-ում, 13 դեկտեմբերի, 2014:

<sup>40</sup> «Լյուբավա Արմենիա» ՓԲԸ պաշտոնական կայք, <http://www.lubawa.am/download/lubawa-military-am.pdf>

<sup>41</sup> ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայք, Քննարկվել են հայ-լեհական ռազմատեխնիկական համագործակցության հարցեր, 8 սեպտեմբերի, 2016 <http://www.mil.am/hy/news/4315>; ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայք, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Դավիթ Փախչանյանի այցը Լեհաստան, 7 սեպտեմբերի, 2017, <http://www.mil.am/hy/news/4945>



պաշտպանության նախարարության արդյունաբերական պալատի նախագահ Մլավոմիր Կուլակովսկու, «Լյուբավա» ընկերության գլխավոր տնօրեն Մարցին Կուբիցայի և «Լյուբավա-Արմենիա» ընկերության տնօրեն Յարոսլավ Ջուխի հետ<sup>42</sup>: Նա լեհական ընկերություններին պաշտոնապես հրավիրեց Երևանում առաջին անգամ կայանալիք «ArmHITec-2016» ռազմարդյունաբերական ցուցահանդեսին: 2017 թվականին կայացած այցի ընթացքում հանդիպումներ են եղել Լեհաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Բարտոշ Չիխոցկու և պաշտպանության նախարարի տեղակալ Բարտոշ Կովնացկու հետ: Վերջիններիս հետ քննարկվել են հայ-լեհական ռազմատեխնիկական համագործակցության, ինչպես նաև փոխգործակցության հետագա սերտացման հարցեր: Լեհաստանի արտգործնախարարությունում տեղի ունեցած հանդիպման ընթացքում լեհական կողմն անդրադարձել է նաև դարաբաղյան հիմնախնդրին՝ մեկ անգամ ևս հաստատելով խնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված իր անփոփոխ դիրքորոշումը: «Մենք կոչ ենք անում բոլոր կողմերին, որ Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը լուծեն խաղաղ ճանապարհով՝ հիմնված հաստատված բազմակողմանի բանակցային ֆորմատի հիման վրա»<sup>43</sup>,– նշել է Չիխոցկին: Հայաստանի պատվիրակությունը Կիևցե քաղաքում տեղի ունեցած ռազմարդյունաբերական 25-րդ ամենամյա միջազգային ցուցահանդեսի օրերին հանդիպումներ է ունեցել լեհական ընկերությունների հետ և նրանց հրավիրել Երևանում կայանալիք հերթական ռազմարդյունաբերական ցուցահանդեսին:

2017 թվականի սեպտեմբերի 27-ին պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Լեհաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Բարտոշ Չիխոցկու գլխավորած պատվիրակությունը: Նա հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանի, պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի և արտաքին գործերի նախարարի տեղակալ Կարեն Նազարյանի հետ<sup>44</sup>: Վիգեն Սարգսյանի հետ հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են պաշտպանության և ռազմական արդյունաբերությանն առնչվող հարցեր: Նույն օրը լրագրողների հետ հանդիպման ընթացքում լեհ պաշտոնյան հայտարարեց, որ Լեհաստանը Հայաստանին առաջարկում է նոր տեխնոլոգիաներ՝ “know-how”,

---

<sup>42</sup> ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայք, Քննարկվել են հայ-լեհական ռազմատեխնիկական համագործակցության հարցեր, 8 սեպտեմբերի, 2016. <http://www.mil.am/hy/news/4315>

<sup>43</sup> Լեհաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք, Poland and Armenia discuss regional security, 6 սեպտեմբերի, 2017. [https://www.ms.gov.pl/en/c/MOBILE/news/poland\\_and\\_armenia\\_discuss\\_regional\\_security](https://www.ms.gov.pl/en/c/MOBILE/news/poland_and_armenia_discuss_regional_security)

<sup>44</sup> Լեհաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք, Polsko-Armenskie konsultacje polityczne, 28 սեպտեմբերի, 2017, [https://armenpress.am/arm/news/906878/hh-pashpanutyayn-nakharary-lehastani-ag-pokhnakharari-het.html](https://www.ms.gov.pl/pl/aktualnosci/wiadomosci/polsko_armenskie_konsultacje_polityczne1?channel=www; Armenpress, ՀՀ պաշտպանության նախարարը Լեհաստանի ԱԳ փոխնախարարի հետ քննարկել է ոլորտային համագործակցության հարցեր, 27 սեպտեմբերի, 2017. <a href=)

որոնց հիման վրա լեհական կողմը պատրաստ է արտադրություն հիմնել<sup>45</sup>: «Արդեն մի քանի տարի աշխատում է լեհ-հայկական ձեռնարկությունը և այն առաջարկում է ամենաառաջադեմ տեխնոլոգիաները, պատրաստ է նաև ձեռք փոխանցել նոր տեխնոլոգիաներ ու “know-how” և դրա հիման վրա այստեղ արտադրություն հիմնել՝ Հայաստանի քաղաքացիների համար ստեղծելով աշխատատեղեր»<sup>46</sup>,– նշել է Չիխոցկին:

Հայ-լեհական ռազմական համագործակցության հեռանկարները քննարկման սեղանին կրկին դրվեցին 2018 թվականի հուլիսի 18-ին՝ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի և Լեհաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Մարեկ Ռեշուտայի ու ռազմական կցորդ գնդապետ Քշիշտով Միկլայեկի միջև տեղի ունեցած հանդիպման շրջանակներում<sup>47</sup>: Հանդիպման առիթը Լեհաստանի նոր ռազմական կցորդ Քշիշտով Միկլայեկի հավատարմագրումն էր Հայաստանում: Քննարկման հիմնական թեման հանդիսացել է երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության խորացումը:

2016թ. ապրիլյան «քառօրյա պատերազմից» հետո հայ-լեհական ռազմական համագործակցությունը մեծ արդիականություն է ստացել Հայաստանի Հանրապետության համար: Այդ հարաբերությունների արդյունավետության բարձր մակարդակը կարող է հիմքեր ստեղծել ազգային ռազմական արդյունաբերություն ստեղծելու, պաշտպանության բանակը երկրի ներսում արտադրվող զենք-զինամթերքով և սարքավորումներով զինելու գործում: Դա հնարավորություն կտա ռուսական արսենալից կախումը նվազեցնել: Սպառազինությունների ժամանակակից մրցավազքի պայմաններում, երբ մեր հարևան Ադրբեջանն օրըստօրե զարգացնում է երկրի ներսում ռազմական արդյունաբերությունը՝ տարբեր պետությունների հետ համատեղ բացելով տարաբնույթ ռազմարդյունաբերական ձեռնարկություններ, Հայաստանին ոչինչ չի մնում անելու, քան առկա միջազգային համագործակցությունը առավելագույնս օգտագործել երկրի ներսում ազգային ռազմական արդյունաբերություն ստեղծելու նպատակով: Այն հնարավորություն է ընձեռում ոչ միայն նվազեցնել կախումը օտարերկրյա (հատկապես ռուսական) զինտեխնիկայի ներկրումներից, այլև համագործակցել առաջատար ռազմական ընկերությունների հետ, զարգացնել տեղական արտադրանքը, ստեղծել նոր աշխատատեղեր՝ փորձելով բավարարել ազգային բանակի պահանջները: Այս հարցում կարևոր դեր է խաղում հայ-լեհական ռազմական համագործակցությունը:

---

<sup>45</sup> Ազատություն ռադիոկայան, Վարչական Երևանին ռազմական նոր տեխնոլոգիաներ է առաջարկել Լեհաստանի փոխարտգործնախարար, 27 սեպտեմբերի, 2017, <https://www.azatutyun.am/a/28760610.html>

<sup>46</sup> Նույն տեղում:

<sup>47</sup> ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայք Հանդիպում ՀՀ ՊՆ վարչական համալիրում, 18 հուլիսի, 2018, <http://www.mil.am/hy/news/5420>

## Армяно-польское военное сотрудничество в 1992-2018 годах

*Матинян Генри*

### Резюме

*Ключевые слова:* Армения, Польша, армяно-польские отношения, военное сотрудничество, военная промышленность, армия, оборона, военные реформы

Дипломатические отношения, установленные между Республикой Армения и Республикой Польша в феврале 1992 г., позволили двум странам сотрудничать в разных сферах. Соглашение от 6 сентября 2004 г. о сотрудничестве в сфере обороны, подписанное между двумя странами в Варшаве, открыло новые перспективы для развития двусторонних отношений. Многочисленные встречи министров обороны двух стран, достигнутые договоренности и подписанные соглашения сделали более актуальным военное сотрудничество Армении и Польши. В статье изложены достижения двустороннего сотрудничества, причины успехов и неудач, подчеркиваются основные направления и тенденции развития. Одним из лучших свидетельств военного сотрудничества между двумя странами является армяно-польское военно-промышленное предприятие «Любава-Армения», основанное в октябре на базе Чаренцаванского станкостроительного завода, следует отметить также, что польская компания «Кабан Лабада» принимает участие в модернизации танков Т-72.

Сотрудничество с Польшей особенно важно с точки зрения создания национальной военной промышленности Армении и удовлетворения потребностей собственной армии, прежде всего учитывая тот факт, что Польша является государством-членом НАТО. Это сотрудничество также важно для мирного урегулирования нагорно-карабахского конфликта.

## Armenian-Polish Military Cooperation in 1992-2018

*Matinyan Henry*

### Summary

**Key words:** *Armenia, Poland, Armenian-Polish relationship, military cooperation, military industry, army, defense, military reforms*

Diplomatic relations, established between the Republic of Armenia and the Republic of Poland in February 1992 enabled the two countries to cooperate in different spheres. 2004 The agreement on defense which was signed between the two countries on the 6<sup>th</sup> of September, in Warsaw, opened new prospects for the development of bilateral relations. The numerous meetings of the defense ministers of the two countries, the agreements reached and the signed agreements made the military cooperation of the Republics of Armenia and Poland more relevant. The article outlines the achievements of bilateral cooperation, the reasons for the successes and failures, emphasizes the main trends and trends of development. One of the best evidence of military cooperation between the two countries is the Armenian-Polish "Lubava-Armenia" military-industrial enterprise, founded on the base of the Charentsavan machine-tool factory in October, which is also upgrading the T-72 tanks to the Polish "Boar Labade" company.

As a NATO member state, cooperation with Poland is particularly important in terms of establishing the Armenian national military industry and meeting the needs of its own army. This cooperation is also important for resolving the Nagorno-Karabakh conflict peacefully.